գետի եղերքին, Կարդուխների երկրի սահմանում (Անարազիս, Դ. 3, 4)։ Հէնց սրանք էին նախահայրերը քաջ օրտանցիների կամ խութացիների, որոնք տակաւին Թ. դարում Բ. Յ. Խոյթ լեռնաշխարհի ձորերում պահել-պահպանել էին իրենց հին, հայերի համար անհասկանալի եւ բարմաթիւ բարբառների բաժանուած լեզուն։ Նրանք ապրում էին կէս-անկախ նախնական պամաններում, յիշեցնելով դեռ այսօր էլ Հիւսիսային Ալբանիայում իշխող վիճակը։

2. Օրարտ կամ Ուրարտու անունը պահել է նաեւ Սասնոյ Մարաթու սար, Մարաթ (Մարութ) անունը, որի վրայ է, համաձայն մի աւանդութեան, Նոյեան տապանը կանգ առել (վրացերէնի մ նախածանց տառի օգնութեամբ եւ երրորդ բ տառը գեղչելով)։

3. Ըստ երեւոյթին Բոհտանում գտնուող եւ դեռ Ե. դարում Բ. Յ. Սարարատ կոչուող լերան անունն էլ նոյն հետքն է պահել իր վրայ։ Համաձայն հնագոյն աւանդութեան՝ դա է իսկական Նոյեան սարը, որի կատարին էլ դեռ Դ. դարում Բ. Յ. տապանի մնացորդները գտած լինել կարծում էին (Յակոբ Մծբնայ հայրապետ)։ Սարարատ կազմուած պիտի լինի, ըստ այդմ, վրացերէնի սա նախածանցի օգնութեամբ. ինչպէս՝ Սա-Բարթվէլօ (Վրաստան) ձեւի մէջ։

Ինքնին հասկանալի է, որ Հայաստանի բնիկների եւ եկուոր հայերի միաձուլումը հետզհետէ, աստիճանաբար է տեղի ունեցել, եւ որ՝ հայերը չեն եղել միշտ էլ մատուցանողի դերում։ Բայց եւ այնպէս հայերը վերջ ի վերջոյ կարողացան իրենց լեզուն ամէն տեղ, ուր բնակութիւն էին հաստատել, գործածական դարձնել նաեւ բնիկների համար։ Մասամբ այդ տեղի ունեցաւ շատ ուշ, քրիստոնէական շրջանում։

Այսպէս եղաւ օրինակ՝ Սիւնիքում։

Սրա հետ մէկտեղ՝ հայերը տեղացիներից հաւանօրէն փոխ առան բազմաթիւ բառեր։ Այսպէս, հին Հայաստանի գաւառներ անունները համարեա բոլորն էլ նախահայկական են, ինչպէս նաեւ, ըստ երեւոյթին, տեղւոյ անունների մեծ մասը։

Նախահայկական ծագում ունի, նմանապէս ցեղական անունների ունի վերջաւորութիւնը, որ համապատասխանում է խալդական -ini վերջաւորութեան։ Նաեւ յոգնակի ցոյց տուող մի շարք վերջաւորութիւններ, օրինակ՝ եր, ներ ու աւելի հին ձեւը՝ եար, որոնք գրաբարում տեղ-տեղ միայն հանդիպում են, այն էլ ոչ զուտ դասական հեղինակների մօտ, որոնք սակայն միջնադարեան եւ մանաւանդ աշխարհաբար հայերէնում բոլորովին վտարել են հին ձեւերը, ծագում են Հայաստանի նախաբնիկների «կովկասեան» լեզուներից։

Զարմանալի չէ նաեւ, որ նորեկ հայերը, որոնք սկզբից իսկ փոքրամասնութիւն էին կազմում, այդ ձուլման գործողութեան ընթացքին նաեւ իրենց մարմնակազմով շատ փոխուել են։ Թէ նրանք Եւրոպայում եւ Փոքր Ասիայում, ինչպէս նաեւ Փոքր Հայքում եղած միջոցին ի՞նչ աստիճան խառնուել են ոչ-Հնդեւրոպական տարրերի հետ, մնում է անծանօթ։

Հետեւեալը ցոյց է տալիս, որ հայերի ձուլումը հիթիթների հետ իսկապէս որ ուժեղ է եղել։ Այն որ՝ դեռ կայսրների միջոցին կըրթուած հայեր դիտակցում էին, թէ Երէզ աւանի Անահիտ դիցուհու պաշտամունքը բոլորովին նոյնն էր, ինչ որ Իրիսի եւ Սարոսի եղերքին գտնուող երկու Կոմանա քաղաքների Մա դիցուհու պաշտամունքը. մի տեղեկութիւն, որ մեզ հաղորդում է Պրոկոպիոս։ Դրանից հետեւցնել կարելի է, որ հայերը փոխ են առել հիթիթական դիցուհու պաշտամունքը եւ յետոյ նրան փոխանցել Իրանեան Անահիտա անունը։

Այս ամէնով մէկտեղ՝ հայերի եւ օտար ցեղերի միաձուլումը տեղի է ունեցել գլխաւորապէս աւելի ուշ, երբեմնի Ուրարտու երկրում։

* * *

Ինչ վերաբերում է Երասխի հովտին կամ Այրարատեան Դաշտին, հայերից առաջ այդտեղ ապրելիս են եղել Իրանական վաչկատուն ցեղեր։

Արաքս անունն եւս, հայկական տառադարձութեամբ Երասխ, Իրանական ծագում ունի։ Դրան զուգընթաց չէ պահուել գետի զուտ հայկական եւ կամ զուտ վրացական մի անուն եւս, ինչ որ, ընդհակառակը, Կուր գետի համար տեղի ունեցել է (վրացերէն՝ Մթկվարի)։